ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00374 10) 511-771 www.court.am

ԴԴ-1 Ն-4366

« 07 » հունիս 2023թ.

Ա/Ձ Սևակ Մնացականյանին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ս. Զորավար 38/1

Հարգելի պարոն Մնացականյան,

Հայտնում ենք, որ համաձայն Դատական դեպարտամենտի և Ա/Ձ Սևակ Մնացականյանի միջև 25.07.2022 թվականին կնքված «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-3» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և 23.03.2023 թվականի կնքված թիվ N 2 համաձայնագրով նախատեսված օդորակիչների վերանորոգման ծառայությունները Ձեր կողմից չեն մատուցվել:

Նշված ծառայությունները մատուցվում են էլեկտրոնային փոստի միջոցով կամ բանավոր հայտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում /առանց համապատասխան մասերի փոխարինման/ և 5 աշխատանքային օրվա ընթացքում /մասերի փոխարինումով/:

Նշվածով պայմանավորված՝ 2023 թվականի ապրիլի 4-ին էլեկտրոնային փոստի միջոցով Ձեզ տեղեկացվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Եղվարդ նստավայրում վերանորոգնման կարիք ունեցող օդորակիչների մասին, իսկ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում առկա վերանորոգման կարիք ունեցող օդորակիչների մասով տեղեկացրել ենք բանավոր, սակայն մինչ օրս ծառայությունները չեն մատուցվել: Հարկ եմ համարում հայտնել, որ սույն թվականի ապրիլի 25-ին ԴԴ-3-Ե-3360 գրությամբ Ձեզ ծանուցվել է վերոգրյալ խնդրի մասին, ինչպես նաև 2023 թվականի մայիսի 15-ին

ԴԴ-3-Ե-3782 գրությամբ Ձեզ տրվել է 10 օրյա ժամկետ և ուղարկվել է հայտեր սակայն մինչև օրս նշվածի վերաբերյալ Ձեր կողմից որևէ արձագանք չի եղել և ծառայությունները չեն մատուցվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջները Պատվիրատուն միակողմանի լուծում է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Ա/Ձ Սևակ Մնացականյանը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել՝ 18600 (տասնութ հազար) ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 5.3 կետի համաձայն:

Հարգանքով՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Ա. Ասատրյան
Հեռ. 010511777